Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11
8707

ԿԱՐԳ ԺԱՄԱՍԱՑՈՒԹԵԱՆ

ՎԱՍՆ ՏՕՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԻ

II
8707

ԿԱՐԳ ԺԱՄԱՍԱՑՈՒԹԵԱՆ

ՎԱՍՆ ՏՕՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԻ

ՈՐ ԿԱՏԱՐԵՍՑԻ ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԻՈՍԻ ԺԱ.Ի ԾԱՅՐԱԳՈՅՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

Ի ՎԵՐՋՆՈՒՄՆ ԿԻՒՐԱԿԷԻ ԱՄՍԵԱՆՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

ՅԱՐՄԱՐԵԱԼ ՀԱՅ ԾԻՍԻ

ԵՒ ՔԱՂԵԱԼ Ի ՇԱՐԱԿՆՈՅԼ ԵՒ Ի ԾԻՍԱՐԱՆԼ

ԱՐՏՕՆՈՒԹԵԱՄԲ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԵՒ ԳԵՐԵՐԶԱՆԻԿ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ

ՏԵԱՌՆ ՊՕՂՈՍԻ ՊԵՏՐՈՍԻ ԺԱ.Ի ԹԷՐԶԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. Մ. ՍԷԹԵԱՆ

1926

ՁՕՆ

ԱՌ ՍՐԲԱԶԱՆ ԳԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ ՄԵՐ ՊԻՈՍ ԺԱ.

ՊԻՈՍ ԺԱ.

ԵՐԱՆԱՊԷՍ ԻՇԽՈՂ

ՀԵՂԻՆԱԿ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՏՕՆԻՆ

ԲԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՄԵՆԵՐԱՆԵԱԼ ՀԱՅՐ

Ծոխութիւն արքայական Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի, որոյ սահմանեցեր օր մի տօնական, զոր հրամայեցեր կատարել ամի ամի ընդ ամենայն աշխարհ, տուեալ առ այդ Թուղթ մի Շրջաբերական Առաքելական իշխանութեամբ քով ի ԺԱ. աւուր ամսեանն Դեկտեմբերի Ամի 1925 է արդարև այնպիսի իմն առանցք հաւատոց, բարոյից և վարչութեան հանրային իրաց, զի կիրարկութեամբ եւեթ պաշտաման նորին եթէ կրօնք, եթէ կենցաղ և եթէ համօրէն ազգ մարդկային հաստատին պահեսցին, իսկ լքմամբ նորին անդարձ կործանեսցին։

Զի «չիք այլոյ իւիք փրկութիւն, զի եւ ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ։» (Գործք. Ա՝. Դ, 12)։

Եւ արդ Թագաւորութիւն Քրիստոսի է ինքն իսկ Եկեղեցի, զոր Դու, յաջորդ Պետրոսի, վարես իշխանութեամբ բանալեաց, զորս ի փրկութիւն անհատից և ի հաստատութիւն համօրէն Ընկերութեան ստացեալ ունիս։ Ուստի զՏօնախմբութիւն Քրիստոսի Թագաւորի դատանեմք զոյ հան-

11-8707գ

դիսութիւն եթէ Եկեղեցւոյ և եթէ Նորին իսկ Առաքելական Գահոյն։

Համոզեալ եմք եթէ չէր հնար այլ իմն պատշաճագոյն քան զայս դարման յարմարել ընդդէմ յարաճուն չարեաց աւուրց արդեաց մերոց։ Այսու հաւատովք, Հարքն մեր, նկատեալ զՍուրբ Խաչն իբրև զԳահ Քրիստոսի Թագաւորին և միանգամայն իբրև զԱթոռ Եկեղեցւոյ, որ ունի համահաւաքել զհամօրէն սեռն բանաւոր կենդանեաց, (ՀՄՄՍ. Օրհն. ԳՇ. ՠՠՠ Տ.Ն.Խ.Ի.), միաւորեցին Տօնի Սրբոյ Խաչին առանձնական հանդիսութիւն իմն Եկեղեցւոյ որպէս Թագաւորութեան Աստուծոյ, (ՀՄՄՍ. Շ.Բ. ՠՠՠ Խ.Ի.Ի.Ն.)։ Եւ նախախնամական իմն զուգադիպութեամբ, ի վերջնումն Կիւրակէի ամսեանն Հոկտեմբերի կատարի առ մեզ և այլ իմն Տօն Խաչի, այն է յիշատակ Գիւտի Նորին Սրբոյ Խաչին։

Եւ քանզի հաւատամք եթէ նախատինք Խաչի պատրաստեն մեզ Յարութիւն և Փառս, Մեք, Հովիւք Հայ Եկեղեցւոյ, մնացականք ի մեծէ և յաննախընթաց տագնապէ տառապեալ Ազգիս, պինդ ունիմք զյոյս զի նոյն Եկեղեցին մեր, Հայրախնամ հովանաւորութեամբ քով, յարիցէ յաւուր միում առ ի յանգ հանել զգործ դարձի բաժանեալ եղբարց մերոց ի ծոց Եկեղեցւոյ։ Շարժեալք այսու զգացմամբ հաւատոյ, յուսոյ և պատշաճ յարգանաց առ Գահդ Առաքելական և առ Քեզ, Ամեներ անեալ Հայր, սահմանեցաք զոր ինչ գտաք յարմարագոյնս այսմ մեծի Տօնիս, քաղելով վայելչօրէն ի Գրոց անտի Հայ Ծիսի, առանց նորոյ իրիք շարադրութեան, հետեւելով ճշգրտօրէն սովորութեան և արարողութեանց ժամակարգութեան մերում, և վճռեցաք կատարել զայն ընդ Տիեզերական Եկեղեցւոյ, ըստ կանոնի որ ընդ թուով 678 ազգային Սինոդոսի մերոյ, միաբան հաւանութեամբ Արևի Եպիսկոպոսաց (յետ լսելոյ և զկարծիս արանց մասնագիտաց եթէ յաշխարհիկ և եթէ ի կրօնաւոր Կղերէ մերմէ։)

Եւ արդ համարձակիմք ձօնել Քեզ, Ամեներ անեալ Հայր,

Հեղինակիդ այսր Մեծի Տօնիս զայս հաւատիս հաւատոց Հայ Եկեղեցւոյս ի Քրիստոս Թագաւորն և Առաքելական Աթոռդ, զօրացեալ այնու վստահութեամբ՝ զի զայս փոքրիկ մասն Հօտին քոյ արժանի համարեսցես առանձնայատուկ խնամոց քոց, քանզի որ ի ծայրագոյն հարուածոց դիպաց խոշտանգեալն է, առաւել եւս կարօտ է շուտափոյթ հոգատարութեան Մեծի Հօտապետիդ։

Թագաւորն յաւիտենական ողջանդամ պահեսցէ զՔեզ առ յամայր ամս և լուիցէ ձայնի մաղթանաց մերոց զորս հաճոյ է մեզ կրկնել բանիւք Շարակնոցին մերոյ. «Ի վերայ Վիմին հաւատոյ շինեցեր զՔո Սուրբ զեկեղեցի, զսա պահեա ի խաղաղութեան։ Որ շնորհեցեր ողորմութիւն ի բնակարանս հրեշտակաց եւ մարդկան բաւական, տուր անս զանշարժ քո զիւաղաղութիւն։ Ի տաճարի փառաց արքութեան քոյ թեզ երգեն մանկունք, տուր սոցա զառաս քո զողորմութիւն։ (Շար. Տօնի Եկեղեցւոյ)։

Եւ զի լուիցէ Աստուած աղաչանաց մերոց, հաճեաց, Ամեներ անեալ Հայր, հաստատել առաքելական օրհնութեամբ զոր ինչ, անկեալ յոտս Սրբութեան քոյ, ժառեմ վասն Եպիսկոպոսաց, վասն Կղերի մերոյ և վասն Հաւատացելոց որ յանձն արարեալ են խնամոց մերոց, և վասն համօրէն Հայ Ժողովրդեանս։

Սրբութեան Ձերոյ
Ամենախոնարհ, Ամենաջերմ,
Ամենահնազանդ Որդի
† ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԶԼԵԱՆ ԵՊՍԿ. ՏՐԱՊԻԶՈՆԻ
Առաք. Այցելու եւ Ընդհ. Փոխանորդ
Հայ Կաթ. Պատրիարքութեան



ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ
ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.
ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՅ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԳԱՀԷՆ ՀՌՈՎՄԱՅ
ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ԵՂԲԱՐՑ ՄԵՐՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԵՒ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԵՒ ՀԱՄՕՐԷՆ ԿՂԵՐԻ ՀԱՅ ԾԻՍԻ
ՈՂՋՈՅՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՒԱՆԴ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Երիցս երանեալ Քահանայապետն մեր ՊԻՈՍ ԺԱ. չրջաբերական թղթովն իւրով առ համօրէն կաթողիկէ աշխարհ, որ ի ԺԱ. աւուր ամսեանն Դեկտեմբերի ամի Տեառն 1925, ի կիր արկեալ զԱռաքելական իշխանութիւնն, որ տուեալն է նմա յաստուածակոյս կողմանէ անտի ի վերայ ընդհանրական եկեղեցւոյ, հաստատեալ է Տօն մի առանձին ի պատիւ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԻ, և հրամայէ տօնել զայն ամի ամի ի վերջնումն կիւրակէի ամսեանն Հոկտեմբերի, յորում և պարտ գնէ անդրէն նուիրելոյ զազգ մարդկան առ Սուրբ Սիրտն Յիսուսի։

Զէ մեզ աստէն, Պատուական Եղբարք, հաւանեցուցանել զմիտս Ձեր եթէ քանի ըմբռն և պատշաճ իցէ մուծանել և առ մեզ ի մերում Ծիսի զՏօնս այս փառատրութեան ԹԱԳԱՒՈՐԻՆ Անմահի Յիսուսի Քրիստոսի, առ ի չզատանելոյ մեր և յայսմ ի Տիեզերական Եկեղեցւոյ որ զկեանս հաւատոց առաւել եւս կենօք ի յայտ բերէ յառաջդիմութեամբ իւիք աստուածային պաշտաման և ծիսի, որ այսպէս զոյգ ընդ անտեսութեան չնորհաց յեկեղեցւոջ «Ճէ ջՃՀՄՆ Ա-ՊՀԲԺՅ» (Կող. Բ. 19)։ Այսր աղագաւ և այսու հաւատովք երանաչնորհ Հայրապետք մեր բազում ինչ յընթացս ամաց ընկալեալ ըստ պահանջելոյ դիպաց և պիտոյից եթէ ի Տօնացուցի, եթէ ի Ժամակարգութեան և յայլ Ծիսական մատեանս յաւելեալ են։ Ապաքէն քաջ ծանօթ են մեզ, Պատուական Եղբարք, միտք Ձեր, որ միահաւան եղեալ Արհիապատիւ Եղբօր Մերում Տեառն Յովհաննու Նազլեան Եպիսկոպոսին Տրապիզոնի, Առաքելական Այցելուի և Ընդհանուր Փոխանորդի Հայ Կաթողիկէ Պատրիարքութեանս, առաջի դնէք մեզ, յետ պարտ և պատշաճ քննութեան և ուղղութեան, զկարգ ինչ ժամասացութեանց վասն այդր մեծի Տօնի Յիսուսի Քրիստոսի Թագաւորի։

Եւ արդ յարկանել մեր ակն յայդ կարգ, ունելմք ապաքէն նոր ինն պատճառ պանծալոյ ի պարծանս անմահ Հայրապետաց Հայ Եկեղեցւոյս, զի առանց հնարելոյ նորագոյն ինչ Շարական կամ Տաղ, յանոպառ բովէ անտի հոգեշունչ և ճոխիմաց Շարականացին մերոյ քաղեալ բաւէ, զոր ինչ զոյգ ընդ Աստուածաշունչ գրոց և Ծիսարանի մերոյ մարթ էր

հայթայթել ի փառաբանութիւն և ի ջատագովութիւն Թագաւորութեան Քրիստոսի։

Էր ապաքէն և կայ յիշատակ ինչ Թագաւորութեան Քրիստոսի ի Կիւրակէի Ծաղկազարդին, այլ այն օր նուիրեալ է մանաւանդ յիշատակի կրկին Գալստեան Տեառն ի փրկել չարչարանօք յաւուրսն տնտեսութեան երկրաւոր կենցաղոյն և ի դատել զազգ մարդկան յաւուրն յետնում։ Ապա չգոյ և առ մեզ որպէս առ Լատինսն, ըստ վկայութեան նորին իսկ Սրբազան Քահանայապետին մերոյ, Տօն ինչ որ կերպապէս (ըստ ասացուածոյ Դպրոցաց) յիշատակեսցէ զԹագաւորութիւն Քրիստոսի։

Ուստի և մեք հաւանեալ համախորհուրդ կարծեաց Արհիեպատիս Եղբարցդ, պահելով Սիւնհոդոսի զսահմանիչ վճիռ եթէ զօրէ Տօնին, յորում սովոր է առ մեզ հանդիպիլ Տօն Գիւտի Խաչին, եթէ մանաւանդ զծիսական կարգէ որ, առաջի մեր արկեալն է առ ի վաւերական առնել, ճոխութեամբ Կաթողիկոսական Պատրիարքական իշխանութեանս, հաստատեմք զայն և թոյլ տամք Արհիեպատիս Փոխանորդի Պատրիարքութեանս ի լոյս հանել յառաջամեայ կիրակութիւն։

Եւ յուսով զի «Աստուած խաղաղութեան որ եհան ի մեռելոց զՀովիւն հոգոյ զմեծն արեամբ յաւիտենական ուխտին զՏէրն Մեր Յիսուս,» կազմեալ անդրէն զյարգոյ և զարդիւնաչատ նուիրապետութիւն մեր, «առնէ զկոյր դորա, և արասցէ ի մեջ ընծայն է։» (Եբր. ԺԳ, 20—21), մաղթեմք այսու նորահաստատ Տօնիս ընդ ամենայն աշխարհ և առ մեզ, զի յաւելցին ժամակարգ աղօթիւքս,» «Թագաւորին յաւիտենից անեղծի և աներևոյթի, միոյն Աստուծոյ փառք և պատիւ յաւիտեան յաւիտենից Ամէն։ (Ա. Տիմ. Ա. 17)։

Առ հաւատչեայ մաղթանացս տամք Զեզ, Պատուական Եղբարք, համօրէն Կղերի և ժողովրդեանս զՀայրապետական մեր զօրհնութիւն։

Տուեալ ի Հռովմ, արտաքոյ դրան Սուրբ Պողոսի, յամի Տեառն 1926, ի Տօնի Ս. Սրտին Յիսուսի ի ԺԱ. աւուր ամբողջեանն Յունիսի, և յեօթն և տասներորդ ամի Պատրիարքութեան մերում։

† ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԷՐԶԵԱՆ
Կաթողիկոս Պատրիարք Կիլիկիոյ

Յայտ առնեմք եթէ զկարգ Հասարակաց Աղօթից որ վասն Տօնի Քրիստոսի Թագաւորի յօրինեալն է, ըստ կանոնաց սահմանելոց յԱզգային Սիւնհոդոսէ ընդ թուով 678. մարթ է ի լոյս ընծայել եւ յամենայն կղերէ մերմէ ի կիր արկանել։

† ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍԿՈՊՈՍ ՆԱԶԱԼԵԱՆ
Վիճակաւոր Տրապիզոնի, Առաքելական
Այցելու Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան



Դիւանապետ
ՎԱՀԱՆ Ծ. Վ. ՔՋՈՒՐԵԱՆ

ՇԱԲԱԹ

Որ կիրակնամուտն իցէ Տօնի Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի Թագաւորի

ՑԵՐԵԿՈՅԻՆ

Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր։

Ես առ Աստուած կարդացի։

Խոնարհեցո։

Ապրեցո։

Լոյս զուարթ։

Հասեալքս ամենեքեան։

Մեղեդի Յարութեան ԲՁ. Տէր Թագաւորեաց ցնծասցէ երկիր, ուրախ եղիցին կղզիք բազումք։

Երևեցան փայլատակունք նորա տիեզերաց, ետես և սասանեցաւ երկիր։

Ասացուք։

Աղօթ, Լուր ձայնից։

Սուրբ Աստուած։ Փառաւորեալ։

Զկնի Սուրբ Աստուածածին, Դնչ-ոչ Սաղմս ՃԻ. Համբարձի ՂԵՆՈՆ Դ-ԲՈՆ ՔՀԱՆԱՅԻ Ե- ՅԱՊԵՍ ԵԼՆԷՆ ԽՍԼԻ- Ե- ԱՏԵՊԱՆԱ-, ԲՆԿՕՒ Ե- ՄՈՏԵԼԻՆՕՒ Ե- ԱՄԵՆԱՅՆ ՀՐԴԵՍՕՒ Ե- ՍԵՆ.

Համբարձի ԱՁ։

Սուրբ ես Տէր զօրութեանց որ բնակեալդ ես ի յերկինս. և բարեբանիս ի սրբոց քոց։ Երկնային զօրութիւնք սերովբէք և քերովբէք. անդադար օրհնեն Սուրբ զանունդ քո։ Քահանայք ընդ նոսին պաշտօնեայք և ժողովուրք. երկրպագեսցուք տէրութեանդ քո։

Լոյս որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ առաքեցար. և լուսով իմանալեաւ լրցեր զարարածս. օրհնեալ ես թագաւոր յաւիտենից։ Փառք Հօր. Որ ըզլոյսն ի սկզբանէ հաստատեցեր վերըստին. և զխաւարն անգիտութեան յարութեամբըդ քով հալածեցեր. օրհնեալ։ Այժմ և միշտ։ Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն, երգեսցուք ցընծութեամբ ի յարութեան երեկոյիս. օրհնեալ։

Զկնի Քարոզ. Վասն խաղաղութեան։

Աղօթ. Հայր գթած։

Ապա Նախապօնակ առնիլէր։

Սարկաւագն ի յոյն բարբառ ասէ. Եւ եւս խաղաղութեան։ Եւ-պայ օրհնել ՂԲՈՐՎԱՆ։ Հանդիսապետն. Օրհնութիւն և փառք Հօր։

Դպիրքն երգէն զՕրհնութիւնն Տնէ Եկեղեցոյ ԳՁ. Ուրախ լեր սուրբ եկեղեցի։ Ե- Հարցն Ա-ՀՔ Երկ-ՂԲ-ՌԷ ԱՐ. ԲՁ. Որ Արարիչդ ես յաւիտենից, Ի-Ր ԱՐՕՔՆ։ Հանդիսապետն ելանէ ի բեմ ի- ինկարկէ ըստ սովորութեան նախ Ա-ՀՔ խօսանին. ապա ինքն խօսանայ, ապա Քահանայքն ի- ժողովրդեան ի- մնայ ընդ ցվերջ Շարականն։

Զկնի Քարոզ. Խնդրեսցուք։ Կեցո՛ յոյնի-։

Աղօթ. Թագաւոր խաղաղութեան։

Հայր Մեր։

ԿԻՒՐԱԿԷ

Որ վերջինն իցէ Ամսեան Հոկտեմբերի։

ՏՕՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՒՈՐԻ

Ի ԳԻՇԵՐԻ

Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր։

Տէր եթէ չրթունս։

Տէր զի բազում եղեն։

Ցիշեսցուք ի գիշերի։

Զարթիք փառք իմ։

Քարոզ Զարթուցեալքս։

Առաւօտ լուսոյ։

Աղօթ. Զքէն գոհանամք Տէր Աստուած մեր։

Կանանաքլուխ ըսա Զայնէ։

Ապա Հանքապետան Շարական ըսա Զայնին։

Ալէլուիա Հանքապետան է. Աւետարան Տաճարին. ըսա Զայնին։

Աստուած Անեղ. ըսա Զայնէ. է. պոռն Դ յԱրարիչն. Թագաւոր փառաց Քրիստոս։

Ապա. Հոգւոցն Հանդուցելոց։ Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր։

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴԶ.

Ուրախ լեր սուրբ եկեղեցի. քանզի Քրիստոս արքայն երկնից, այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով, և զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք։ Ընդդա յոյժ դուստր Սիովնի, քանզի երկինս երկինք եղեն, այսօր վերըստին քո նորոգմամբ, և Թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակիլ ի քեզ։ Ընդ դաս երկնաւոր զօրացն վերառեալ տօնեմքք քեզ այսօր զանդադար փառատրութիւնս, ուրախ լեր հարսն անարատ անքընին քո խորհրդով։

Որոն սրբութեան կանգնեցաւ սուրբ Եկեղեցի և Քրիստոս Թագաւորն ի սմա պատարագեալ, եկայք հաւատացեալք երգեսցուք Քրիստոսի երգ նոր։ Դասք հրեշտակացըն վայր իջեալ յերկնից երգեն ասելով, հրաշալի ձայնիւ եղանակելով, երգեն զերգս օրհնութեան երրեակ սրբասաց ձայնիւ։

Այսօր հրեշտակաց բազմութիւնքըն տօնակից լինին ընդ մեզ, քանզի երկնաւոր Թագաւորն եկաւորէ ի սուրբ եկեղեցի։ Ընդդա և զուարճացիր հարսնացեալըդ յԱստուծոյ եկեղեցի, քանզի զքեզ Տէրըն տերանց ընտրեաց և հաճեցաւ բնակիլ ի քեզ։ Լուսաւորեա՛ Կաթողիկէ Եկեղեցի, քանզի ի քեզ չող աստուածեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց, և լուսաւորեաց ըզմանկունսըս քո։

Որք արժանաւորեցայք ի կոչումն փառատրութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն երգ նոր, երգեցէք զանուն նորա ձայնիւ ցընծութեամբ յօրհնութիւն ի նոր։ Զօրացեալ ի քեզ Քրիստոս ժողովուրդք հաւատացելոց, ճշմարիտ խոստովանութեամբ օրհնեմք զխորհուրդ աստուածային կենսաբեր տընօրենութեան քո, փառաւորելով զանաւոր և զըսքանչելի անուն քո, Տէր Տէրը մեծ ի վերայ ամենայն երկրի։ Ուրախ լեր եկեղեցի սուրբ, հարսն երկնաւոր խորհրդոյն ի փառս ամենասուրբ Երրորդութեանն. որ համագոյ իշխանութեամբն իւրով զարդարեաց. ծագմամբ լուսոյ պրսակէ ըզքեզ ի պատիւ ամենայն սրբոցովք իւրովք։

Լուսաւորեա Երուսաղէմ զի հասեալ է լոյս քո, զարդարեա՛ զամուրս քո, և փառք Տեառն ի վերայ քո ծագեցին։ Օրհներգութեամբ սաղմոսիւք քեզ վայելէ Աստուած օրհնութիւն ի Սիովնէ, և քեզ մատուցին աղօթքք յԵրուսաղէմ։ Գովեա Երուսաղէմ զՏէր և օրհնեա զԱստուած քո, նոր ժողովուրդ զըշխոյ դուստրը Սիովնի։

Այսօր Աստուածութիւնքն զուարճանայ նոր հաստատելով զերկիր, պարքք սուրբ փառաբանեն զըարթնոց, և մեք ձայնիւ օրհնութեամբ զարդարեսցուք սուրբ ըզտօնըս։ Այսօր և մեք ցընծամք տօնիս ընդհանուր հընչմամբ, մեծապէս փայլմամբ երեւեցաւ աշխարհի, առ Աստուած գոհութիւնք ըթանան պատմեն անդադար ըզբան կենդանի։ Ընդդա և զուարճացիր եկեղեցի կոյս սուրբ և հարսն երկնաւոր փեսային, ահա տեսանեմք զօծեալն ըզՔրիստոս գոյով առքեզ լոյսըն հեթանոսաց։

Հրաշափառ տեսութիւն ի Կաթողիկէ Եկեղեցւոյ տեսանի, գործարան մահու մահուամբ ստիթ գոլ կենաց, և մահացուցիչ նախաստեղծին մահուամբ գոլ չնորհող յարութեան։ Պարզև գերագոյն պարգևի այսօր հաւատացելոց, և մահացուն

[illegible]

ի կենաց առնու իւր զօրս վերելեակս, և թռուցեալ վերագայի բնակիլ ի տեղւոջն սրբութեան։ Եկայք ժողովուրդք ընդ հոգեղինացն սպասաւորեսցուք, երկրպագեսցուք Աստուածային սուրբ նշանիս, փառաւորեսցուք զՀրաշագործ պարգեւաց տալողն։

ՀԳ, Արեգակն արդարութեան Քրիստոս ծագեալ յաշխարհ հալածեաց զխաւարն անգիտութեան, և յետ մահու և յարութեան համբարձաւ առ Հայր յորմէ ծագեաց, որ երկրպագի յերկնաւորաց և յերկրաւորաց ընդ Հօր և սուրբ Հոգւոյն. Վասն որոյ և մեք երկրպագանեմք Հօր Հոգւով և ճշմարտութեամբ։ Որ փոխանակ ծոցածին Բանին որ ել յերկինս, առաքեցաւ աւետիքն Հօր ի բարձանց Հոգին ճշմարտութեան, մխիթարել զորս յԱդամայ արտմեցելոց և հրաշնել զընտրեալ դաս առաքելոցն. Վասն որոյ։ Այսօր տրրտմական գիշերային լուծան երկունք ծնրնդեան նախամօրն, քանզի զծնեալսն մարմնով ի մահ և յապականութիւն, վերբստին ծնանի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի. Վասն որոյ։

ՀԵ. Որ երկայնամիտդ ես Տէր, քաղցր և անոխակալ հանգո զհոգի քո ծառայի, զի մի դարձցի տնանկ ամաչեցեալ յաւուրն ահեղ ատենին։ Զյիշատակ հրաժարելոցն ի հաճոյս քեզ ընկալցիս, և զուխտս մեր ընկալ որպէս զԱբելին զՆոյին և զԱբրահամն, զի մի։ Ի խորան քում սիրողաց հանգուսցես զծառայս քո, և զհոգիս նոցա դասեսցես ընդ սուրբսս քո. զի մի։

ՄԾ, Զանճառելի լուսոյ Մայր. և զընակարան անսկզբնակից Որդւոյն, օրհնութեամբ մեծացուցանեմք։ Զանհաս տնօրէնութեան Մայր, և զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին. օրհնութեամբ մեծացուցանեմք։— Փառք Հօր. Զբոլորիցս փրկութեան Մայր, որ զանտանելին յէից ի յարգանդի

եբարձ, ըզնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք։ —Այժմ և միշտ։ Ուրախ լեր բերկրեա հարսնացեալ սուրբ եկեղեցի, պայծառացո զմանկունս քո յօրհնաբանութիւն ծագողին զչող լուսոյ ի քեզ մայր եկեղեցի։

ՄԱՂԹԱՆՔ։ Փառք հրաշափառ Թագաւորութեան քո Տէր։ Քրիստոս է Աղօթք ըստ յայնմ։

Ալէլուիա Յարութիւն Ակ։ Ծափս հարէք ամենայն Հեթանոսք։—Հաճեցար Տէր ընդ երկիր քո։

Մաղթանք ըստ Զայնմ։

Օրհնեալ Տէր մեր։

Հայր մեր։

ՅԱՌԱՒՕՏՈՒ

Օրհնեալ Տէր մեր։

Հայր մեր։

Լցաք առաւօտու։

Փառք Հօր։ Եւ եւս խաղաղութեան։ Օրհնութիւն եւ Փառք Հօր։

Օրհնութիւն երից Մանկանցն Դանիելի։ Օրհնեալ ես դու Տէր Աստուած հարցն մերոց։

Մաղթանք։ Օրհնեցէք զԱրարիչն արարածոց։

Ե- ապ- ղէ-ցն ---- Ա--է Երկ--ը-Բրի ----ը, է-ը ---ը։

ՀԱՐՑ ԲՁ.

Որ Արարիչդ ես յաւիտենից, և ստեղծեր զարարածս ամենայն յոչընչէ. Ըզքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց։ Որ թագաւորդ ես թագաւորաց, և չնորհես բանաւոր կենդանի մարդ ի հողոյ. Ըզքեզ։ Որ ապաւէնդ ես մոլորելոց, և խնամես զյուսացեալս ի քեզ տեսչութեամբ. Ըզքեզ։

Գ. ԸզՏէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Օրհնեցէք։ Զթագաւորն և զԱստուածն որ նմա միայնոյ վայելէ օրհնութիւն, և բարձր արարէք ըզնա յաւիտեան։ Օրհնեսցէ։ Զի ծանոյց մեզ սքանչելի խորհուրդ Սուրբ Երրորդութեանն և մի Աստուածութեանն Քրիստոս, և բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Քառող ընդ Հարցն։ Եկեալքս ամենեքեան ի սուրբ կաթողիկէ։

Մաղթանք։ Հզօր, յաղթող, սքանչելագործ, սուրբ մեծի Թագաւորութեան։

Երգ Մարգարէական Աստուածաշնչեն։ Մեծացուսցէ։ Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի։ Արդ արձակեա զծառայս քո։

Եւ ապա ասի Մեծացուսցէ. Բզ

Զքեզ Հայր յառաջ քան զյաւիտեանս բարեբանեն դասք անմարմնոց հրեշտակաց, ձայնիւ երգով գոչեն և աղաղակեն. Աստուած Աստուծոյ և Տէր տերանց Փրկիչ գոլով։ Առաքեցեր զքո Միածինդ մարմնանալ ի սուրբ Կուսէն և անարատ ծնանիլ յորովայնէ անապական, բառնալով զմեր նեղութիւնս. Աստուած։ Շնորհք բարի յերուսաղէմ երեւեցաւ հեթանոսաց, զի Արարիչն յաւիտենից տղայ եղեալ յորդեգրութիւն կենաց կոչէ։ Աստուած։

Քառող ընդ Մեծացուսցէք է Կէրակէ։ Եւ եւս խաղաղութեան։

Աղօթք։ Դու ես Թագաւոր յաւիտեանս յաւիտենից։

Երգ Ի-ղբերէոյ Ա-ւետարանն։ Եղիցի անուն Տեառն։

Ի-ղբերէոյ Ա-ւետարան ըստ Յ-ի։

Երգ ընդ Ի-ղբերէոյ Ա-ւետարանն։

Քառող։ Զուարճացեալքս ամենեքեան։

Աղօթք։ Ամենակեցոյց, ճշմարիտ։

Ե- ասի քոխ։ Ողորմեա ինձ Աստուած։

Եւ ապա ասի Աղերսն- Բզ

Առ ամենեսեան գթած Քրիստոս Թագաւոր խաղաղութեան ըզքեզ աղաչեմք միայն մարդասէր։ Որում այսօր փափագեալ ցանկայր հոգւով և մարմնով, մայր որդւովք իւրովք խնդրէր ըզբարձրագոյն ըզփառս յերկրին կենդանեաց։ Տրուազդ ըզկեանս անմահս առ քեզ աղաղակեմք և միաբան հայցեմք, շնորհեա և մեզ Տէր կալ ի յաջմէ քումմէ։

Քառող ընդ Աղերսեալ։ Երկրպագեմք քեզ Տէր Աստուած մեր։

Մաղթանք։ Ողորմած, գթած, ճշմարիտ, սուրբ մեծի Թագաւորութեան։

Ալելուիա, ալելուիա։ Օրհնեցէք զՏէր յկրկնից։

Եւ ապա ասի Տէր յերդիէոյ, Բզ

Ըզքեզ օրհնեմք որ բաշխողդ ես բարութեանց. և հայցեմք որպէս ի մարդասիրէ. ընդ Մօր քո ընտրելոցն զիմանալի աշխարհն։ Զի դու ես Տէր յորմէ հայցեր մայրն հաւատով հանդերձ որդւովք սրբբեցելովք, ընդ աջմէ քո զփառս և յահեկէ, ընդ որս և մեք աղաչեմք զի դասեսցես ընդ սուրբս քո։ Այլ դու բարձրեալ Փրկիչ որ վասն մեր խանարհեցար, արժանի արա ըզմեզ ըմպել զբաժակ պատուիրանի կենաց քոց Տէր, որով կացցուք յաջմէ քումմէ ի հանդերձեալ քում գալստեանն։

Զկնի Տէր Ցերդիէոյն ասի օրհնութիւն Փառք ի բարձունս։

Մաղթանք։ Փառք պատիւ։

Ա-ւետարան երգ Եկեղեցոյ։ Տան քում վայելէ սրբութիւն։ —Տէր թագաւորեաց։

Քառող։ Ասացուք ամենեքեան։

Աղօթք։ Գոհանամք զքեզ Տէր։

Սուրբ Աստուած։

Մաղթանք։ Փրկիչ զմեզ։

Բ-բ-ղ։ Եւ եւս խաղաղութեան։

Օրհնութիւն և փառք Հօր։

Զկնէ Սուրբ Աստուածածէն Դղէբ։ -ռեն Ս-ղմ- ՀԱ. Ընէ- ծ-ռը։

Կ-բդ։ Երկիր պագցեն նմա ամենայն թագաւորք երկրի, և ամենայն ազգք ծառայեսցեն նմա։

Ս-ղմ- ՀԱ, Աստուած զիրաւունս քո արքայի տուր, զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի։

Դատել ժողովուրդս քո արդարութեամբ, և զաղքատս քո իրաւամբ։

Առցեն լերինք զխաղաղութիւն ժողովրդեան, և բլուրք զարդարութիւն։

Իրաւ արասցէ աղքատաց ժողովրդեան, և կեցուսցէ զորդիս անանկաց, և խոնարհեցուսցէ զամբարտաւանս։

Կացցէ և մնասցէ ընդ արեւու, յառաջ քան զլուսին ազգէ մինչև յազգ։

Իջցէ որպէս զանձրև ի վերայ գեղման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։

Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն բազում խաղաղութիւն, մինչև կատարեսցի լուսին։

Տիրեսցէ նա ի ծովէ մինչև ի ծով, ի գետոց մինչև ի ծագս աշխարհի։

Առաջի նորա նախ հնդիկք անկցին, և թշնամիք նորա հող կերիցեն։

Թագաւորք Թարսի և կղզեաց պատարագս մատուցեն նմա, թագաւորք Արաբայ և Սաբայ պատարագս բերցեն նմա։

Երկիր պագցեն նմա ամենայն թագաւորք երկրի և ամենայն ազգք ծառայեսցեն նմա։

Զի փրկեաց զաղքատն ի հզօրէ, զաղքատն և զոնանկն որոյ ոչ է իւր օգնական։

Անխայեսցէ նա յաղքատն և ի անանկն, և զանձինս անանկաց կեցուսցէ։ Ի վաչխից չարեաց փրկեսցէ զանձինս նոցա։

Պատուական է անուն նորա առաջի նոցա, կեցցէ և տայցի նմա յոսկւոյն Արաբացւոց։

Ցաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ, և զօր հանապազ օրհնեսցեն զնա։

Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր, և ի վերայ գլխոց լերանց։

Բարձրասցի քան զԼիբանան պտուղ նորա, ծաղկեսցի ի քաղաքի Տեառն որպէս խոտ երկրի։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարև է անուն նորա։

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի որ առնէ զսքանչելիս, և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան եղիցի, եղիցի։

Մինչ-ռէ Ս-ղմ-, Բահանայ։ -ր է գ-ռ-ռ, ղ-բ-ն-ռ-ն շ-ր-ջ- և գ-ռ է յե-ռ ա-ն-ն-ց-ռ մ-մ-ղ-ն- լ-ց-ե-լ։ Զկնէ Ս-ղմ-ն Դղէբ։ Երբեն Շաբաթ-ռ ԲՁ։

Ուրախացիր Սրբուհի Գաբրիէլի աւետեաքն, որ քարոզեցան զգալուստս Արքային Տեառն ի յերկնից։ Ողջոյն ընդ քեզ Մարիամ ի քեզ Սուրբ Հոգին եկեսցէ, և զօրութիւն Բարձրելոյն ի վերայ քո հովանասցի։ Որ ծնանելոցն է ի քէն Իսրայէլի առաջնորդ, և ընդհանուր քարոզի Աստուած հզօր անմահ Բանն։

Օրթի։ Խաղաղութիւն ամենեցուն

Ա-ջէ Ա-ե-ա-ռ, ը-ռ Ղ-կ-ռ-ռ, է կ-ղ- երբ-ելէց։ Ա, 26։

Ի Հօրէն Ամենակալէ։

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ (յԱստուծոյ) ի քաղաք մի գալիլեացւոց որում անուն էր Նազարէթ, առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ, ի տանէ Դաւթի, և անուն կուսին Մարիամ։ Եւ եկեալ առ նա ասէ, Ուրախ լեր բերկեալդ, Տէր ընդք եղ։ Եւ նա ընդ

բանն խռովեցաւ, և խորհէր ընդ միտս թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս, այս։ Եւ ասէ ցնա Հրեշտակն, Մի երկնչիր Մարիամ զի գտեր շնորհս յԱստուծոյ։ Եւ ահա յղասջիր և ծնցես Որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս։ Նա եղիցի մեծ, և Որդի Բարձրելոյ կոչեսցի, և տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի Հօր նորա, և թագաւորեսցէ ի վերայ Տանն Յակովբայ ի յաւիտեանս, և թագաւորութեան նորա վախճան մի լիցի։ 33։

Շաբաթն ԳՁ.

Թագաւոր Քրիստոս, էակից Հօր և Հոգւոյն, որ վասն մեր մարմնացար ի սուրբ Կուսէն, թագաւոր փառաց, Քրիստոս, Քեզ փառք։

Որ կամաւոր մահուամբ քո զմահ մեռուցեր, և անապական յարութեամբդ քո նորոգեցեր զաշխարհս, թագաւոր փառաց Քրիստոս, քեզ փառք։

Որ կենդանարար արեամբդ քո լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, երգեմք քեզ ընդ հրեշտակս ասելով. թագաւոր փառաց Քրիստոս, քեզ փառք։

Եբերդ Ա-եաբ-ն, ը-ա Մ-ՊՐԷ-ՍԷ, է կ-ՂՇ Ա-ԷՄ-ԴԷՑ.Ռ.Ա։

Վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ, և ասեն. Ո՞ւր է որ ծնաւ Արքայն Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարեւելս, և եկաք երկիր պագանել նմա։ Եւ իբրեւ լուաւ արքայն Հերովդէս խռովեցաւ և ամենայն Երուսաղէմ ընդ նմա, և ժողովեալ զամենայն զքահանայապետսն և զգրիս ժողովրդեանն, հարցանէր ի նոցանէ թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոսն։ Եւ նոքա ասեն ցնա, ի Բեթղեհէմ Հրէաստանի։ Զի այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին։ Եւ դու Բեթղեհէմ երկիր Յուդայ, ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ, ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ։ Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և ստուգեաց ի նոցանէ զժամանակն աստեղն

երեւելոյ, և արձակեալ զնոսա ի Բեթղեհէմ ասէ. Գնացէք ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք ազդ արասջիք ինձ, զի եւ ես եկեալ երկիր պագից նմա։ Եւ նոքա իբրեւ լուան ի թագաւորէն գնացին, և ահա աստղն զոր տեսին յարեւելս առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերայ ուր էր մանուկն։ Եւ իբրեւ մտին ի տուն, տեսին զմանուկն հանդերձ Մարիամաւ մորբն իւրով, և անկեալ երկիր պագանէին նմա, և բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա պատարագս ոսկի և կնդրուկ և զմուռս։ Եւ հրաման առեալ ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։

Շաբաթն ԲՁ. Թագաւոր փառաց քեզ սպասեսցուք պատրաստեալք արթնութեամբ ընդառաջել որ գաս ի դատել զերկիր։ Անաղօտ վառեալք լապտերքք հաւատոյ ընդ գաս իմաստուն կուսանացն մտանել ի յառագաստ ընդ երկնաւոր փեսային։ Փութասցուք կոնխեալ յառաջ զան զձայն առտուածային բարբառոյն, զի մի մնասցուք արտաքս ըստ չիջման հինգ կուսանացն։

Եբերդ Ա-եաբ-ն, ը-ա Ղ-ԿՈՒ-, է կ-ՂՇ Հ-ՐԱ-Յ։ ԺԹ, 11։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մինչդեռ նորա զայն լսէին յաւել առակ մի և ասէ, վասն մերձենալոյ նորա յԵրուսաղէմ թէ առժամայն յայտնելոց է արքայութիւն Աստուծոյ։ Ասէ, այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ։ Եւ կոչեցեալ զծառայս իւր եւ նոցա տասն մնաս, և ասէ ցնոսա, յարգեցէք զայդ մինչև եկից։ Եւ քաղաքացիք նորա ատէին զնա, առաքեցին հրեշտակս զկնի նորա և ասեն, թէ ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր։ Եւ եղև դառնալ նմա առեալ զթագաւորութիւն և կոչեցեալ զծառայսն որոց տուեալ էր զարծաթն զի գիտասցէ թէ ո զինչ շահեցաւ։ Եկն առաջինն և ասէ, Տէր մնասն քո տասն մնաս արար։ Եւ ասէ ցնա, Ազնիւ ծառայ և բարի, զի ի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի

վերայ տան քաղաքի։ Եկն երկրորդն և ասէ։ Մնասն քո արար հինգ մնաս։ Ասէ ցնա, և դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց։ Եկն միւսն և ասէ, Տէր, ահա մնասն քո զոր ունէի, ծրարեալ ի վարշամակի, երկնչէի ի քէն, զի այր ստամբակ ես, բառնաս զոր ոչ եդիր և հնձես զոր ոչ սերմանեցեր։ Եւ ասէ ցնա, ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ անհաւատ, գիտէիր թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ զոր ոչ եդի, և հնձեմ ուր ոչ սերմանեցի, և ընդէ՞ր ոչ ետուր զարծաթն իմ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի։ Եւ ասէ ցսպասաւորսն, առէք զմանէ զմնասն, և տարայք տուք այնմ որ ունիցի զտասն մնասն։ Եւ ասեն ցնա, Տէր ունի տասն մնաս։ Ասեմ ձեզ, եթէ ամենայնի որ ունիցի ասցի, և յայնմանէ որ ոչն ունիցի, և զոր ունիցին բարձցի ի նմանէ։ Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէք այսր, և սպանէք առաջի իմ։ Եւ իբրև զայս ասաց, գնաց յառաջ երանելի յԵրուսաղէմ։ 28։

Շաբաթն ԴԶ. Թագաւոր զողով քո յաչխարհ, մտեր ի քաղաքն Երուսաղէմ, նստեալ ի վերայ նոր յաւանակի կոչել զհեթանոսս յերկրպագութիւն։ Ծերք ոստովք ձիթենեօք և տղայք ոստովք արմաւենեօք, և երամ երամ զասուք աղաղակէին, Ովսաննա օրհնեալ եկեալ ի յանունէն Տեառն։ Ցնծացաւ սուրբ Սիովն, բերկրեցան սուրբ եկեղեցիք, և խնդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ, օրհնէին զգալուստ քո Փրկիչ յաչխարհ։

Զ՞ԷՐ՞ԷՐ Ա-Ե՞Ա՞Բ՞Ն. ԸՍ՞ Մ՞Բ՞Ս՞Է, Ի Կ՞Ա՞Ն Հ-Ի՞-Ի՞-Ս՞. ԺԱ.1.

Վասն գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ ի Բեթփագէ եւ ի Բեթանիա մօտ ի լեառն ձիթենեաց, առաքէ երկուս յաշակերտաց անտի, և ասէ ցնոսա. Երթայք դուք ի գեղդ որ ընդդէմ ձեր կայ, և նոյնժամայն իբրև մտանէք ի նա, գտանիցէք յաւանակ մի կապեալ, յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նստաւ. լուծէք զնա և ածէք։ Եւ եթէ ոք ասասցէ ձեզ թէ զի լուծանէք զյաւանակդ, ասասջիք թէ Տեառն իւրում պիտոյ է։ Եւ վաղվաղակի առաքեսցէ զնա այսր։ Զոգան և գտին զյաւանակն կապեալ առ դուռս արտաքոյ ի փողոցի անդ, և լուծին զնա։ Եւ ոմանք յորոց անդր կային ասեն ցնոսա։ Զի՞ զործէք, զի՞ լուծանէք զյաւանակդ։ Եւ նոքա ասեն ցնոսա որպէս ասացն Յիսուս, և թոյլ ետուն նոցա։ Ածեն զյաւանակն առ Յիսուս, և արկանեն ի վերայ նորա զհանդերձս, և նստաւ ի վերայ նորա։ Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին ի վերայ ճանապարհին, եւ այլք ոստս ի ծառոց հատանէին, և արկանէին զճանապարհաւն։ Եւ որ առաջին՝ և զկնի երթային, աղաղակէին և ասէին. Ովսաննա Բարձրելոյն։ Օրհնեալ որ գայդ յանուն Տեառն։ Օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի, խաղաղութիւն յերկինս և փառք ի բարձունս։ 10։

Շաբաթն ԲԶ.

Ապաւինեցաք ի խաչ քո արարիչ յաւիտենից, որ ետուր մեզ պահապան յաղթող ընդդէմ թշնամւոյն, աղաչեմք սովաւ Փրկիչ պահպանեա զանձինս մեր։ Բարձրեալ թագաւոր որ վասն մեր ելեր ի խաչ, և բարձեր սովաւ զյանցանսն նաև նախաստեղծին Ադամայ, աղաչեմք սովաւ Փրկիչ պահպանեա զանձինս մեր։ Գլուխ սուրբ հաւատոյ եւ փայտ կենաց մարդկան յայտնեալ, զոր տեսեալ այսոյն պղծոյ կործանեցաւ անկանգնելի. Աղաչեմք սովաւ Փրկիչ պահպանեա զանձինս մեր։ Դողացաւ թշնամին ընդ յայտնել սրոյդ խաչին, և ի յահէ փառաց նորա կործանեցաւ յանդունդս երկրի. Աղաչեմք սովաւ Փրկիչ պահպանեա զանձինս մեր։ Երկինքք ցնծային և երկիրս ուրախանայր, քանզի Փրկիչ ցուցաւ սուրբ խաչն և լուսատու տիեզերաց. Աղաչեմք սովաւ Փրկիչ պահպանեա զանձինս մեր։

Կ՞ՍՐ՞Դ. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Ա՞ՂՄ՞Ս Դ. Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած, ըստ արդարութեան ի նեղութեան ինձ անդորր արարեր, ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց։

Որդիք մարդկան, մինչեւ յե՞րբ էք խստասիրտք։ Ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն։

Ծաներուք զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում, և Տէր լուաւ ինձ ի կարդալ իմում առ նա։

Բարկանայք և մի մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք։

Մատուցէք պատարագս արդարութեան, և յուսացարուք ի Տէր։

Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն Տեառն, նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Ի պտղոյ, ցորենոյ, գինւոյ, ձիթոյ իւրեանց լրացուցեր զնոսա։

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք, զի դու Տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ Ա-ԵՊՈՐԱՆ, ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ, Ի ԲԵԴՆ։ ԺԹ, 1։

Վասն խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս, և գան ետար։ Եւ զինուորացն արարեալ պսակ ի փշոց եդին ի գլուխ նորա, և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի. և գային առ նա եւ ասէին, «Ողջ եր արքայ Հրէից», և հանէին նմա սպասակս։ Եկ դարձեալ Պիղատոս արտաքս և ասէ ցնոսա, ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես վնաս ինչ ի նմա ոչ գտանեմ։ Եկ Յիսուս արտաքս, և ունէր պսակ ի փշոց և հանդերձ ծիրանի. և ասէ ցնոսա, Ահա այրդ ցձեզ։ Իբրև տեսին զնա քահանայապետքն եւ սպասաւորք, զաղաղակ բարձին եւ ասեն ի խաչ հան, ի խաչ հան զդա։ Ասէ ցնոսա Պիղատոս, «Առէք զդա ի ձեզ եւ ձեզէն հանէք ի խաչ։ զի ես ի դմա վնաս ինչ որ գտանեմ։ Պատասխանի ետուն նմա Հրէայքն, Մեք օրէնս ունիմք, եւ ըստ օրինաց մերոց պարտի մեռանել, զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար։ Իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ Պիղատոս, առաւել եւս երկեաւ։

Եմուտ դարձեալ անդրէն յապարանսն եւ ասէ ցՅիսուս, Ուստի՞ ես դու։ Եւ Յիսուս ոչ ետ նմա պատասխանի։ Ասէ ցնա Պիղատոս, «Ընդ իս ո՞չ խօսիս, ո՞չ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ, եւ իշխանութիւն ունիմ արձակել զքեզ։ Պատասխանի ետ Յիսուս, ոչ ունէիր դու իշխանութիւն ի վերայ իմ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ, վասն այնորիկ որ մատնեաց զիս քեզ, նորա մեծ մեղք են։ Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձակել զնա։ Եւ Հրէայքն աղաղակէին և ասէին։ Եթէ զդա արձակես չես բարեկամ կայսեր։ Ամենայն ոք որ թագաւոր կոչէ զանձն իւր հակառակ է կայսեր։ Իսկ Պիղատոս իբրև լուաւ զբանս զայսոսիկ, ած զՅիսուս արտաքս, եւ նստաւ ի վերայ բեմին ի տեղւոջն որ կոչէր քարայատակ, և երբայեցերէն Կապպաթա։ Էր ուրբաթն զատկի, և էր ժամ իբրև վեցերորդ, և ասէ ցՀրէայսն։ Ահա Թագաւորդ ձեր ցձեզ։ Եւ նոքա աղաղակէին։ «Բարձ ի մէնջ, բարձ ի մէնջ և հան զդա ի խաչ»։ Ասէ ցնոսա Պիղատոս։ Ես զԹագաւորդ ձեզ ի խա՞չ հանիցեմ։ Պատասխանի ետուն քահանայապետքն, «Չիք մեր թագաւոր բաց ի Կայսերէ։ Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա զի ի խաչ ելանիցէ։ 16.

ԶԿՆՔ Ա-ԵՊՈՐԱՆՆԻՆ. Նորաստեղծեալ։ —Խնդրեսցուց։—

Կեցո Զայնէ-. — Քում ամենազօր Թագաւորութեանդ։ —Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր։

ՑԵՐԵԿՈՅԻՆ

Օրհնեալ Տէր մեր։

Հայր Մեր։

Ես առ Աստուած կարդացի։

Փառք Հօր։ Եւ եւս։ Օրհնութիւն և փառք Հօր։

Սաղմոս ԶԵ. Խոնարհեցո Տէր զունկն քո։

Մաղթանք. Փառք Քեզ։ Եւ եւս։ Օրհնութիւն և փառք Հօր։

Սաղմոս ՃԼԹ. Ապրեցո զիս Տէր։

Մաղթանք։ Օրհնեալ Տէր որ ընակեալդ ես։

Քարոզ։ Հասեալքս ամենեքեան։

Մաղթանք։ Հասեալք ի ժամ։

Մեղեդի Յարութեան Ակ. Աթոռ քո Աստուած, յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան, գաւազան արքայութեան քո։

Բղխեաց սիրտ իմ բան բարի, և ասեմ զգործս իմ թագաւորի։

Քարոզ։ Ասացուք։

Աղօթք։ Լուր ձայնից մերոց։

Ե- -ող -ոչ Սուրբ Աստուած։ Փառաւորեալ եւ օրհնեալ։

Մաղթանք։ Փրկել զմեզ։

Քարոզ։ Եւ եւս խաղաղութեան։ Վասն լսելի։ Օրհնութիւն և փառք Հօր։

Սաղմոս ՃԻ։ Համբարձի զաչս իմ։

Հոմբարձիչ Յարութեան Ակ

Առաքեցար ի Հօրէ Բանդ Աստուած ի փրկութիւն ազգի մարդկան, Օրհնեմք զքեզ սուրբ Աստուած։ — Ի գերեզման իջեր Թագաւոր անմահ, և ի Հօրէ ոչ մեկնեցար, Օրհնեմք զքեզ սուրբ Աստուած։ — Ի յերրորդ աւուր յարեար աստուածապէս և ի յերկինս համբարձար, փառք յարութեան քո Տէր, օրհնեմք զքեզ Սուրբ Աստուած.

Զկնէ Հայր գթածէն յոյնէ-, Սաղմոս ՂԸ.

Կոչէր։ Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք ի լեառն սուրբ նորա զի սուրբ է Տէր Աստուած մեր։

Սաղմոս. Տէր Թագաւորեաց բարկացան ժողովուրդք, որ նստիս ի քրովբէս, սասանեցաւ երկիր։

Տէր ի Սիովն մեծ է և բարձր է ի վերայ ամենայն ժողովրդոց։

Խոստովան եղերուք անուան քում մեծի, զի ահաւոր և սուրբ է, և պատիւ Թագաւորի զիրաւունս սիրէ։

Դու պատրաստեցեր զուղղութիւն, զիրաւունս և զարդարութիւն Յակովբայ դու արարեր։

Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք պատուանդանի ոտից նորա զի սուրբ է։

Մովսէս և Ահարոն երիցունք նորա, Սամուէլ ընդ այնոսիկ որ կարդան զանուն նորա։

Կարդային առ Տէր և նա լսէր նոցա, և ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա։

Պահէին զվկայութիւն նորա և զհրամանս զոր ետ նոցա։

Տէր Աստուած մեր դու լսէիր նոցա, Աստուած դու քաւիչ լինէիր, վրէժխնդիր ի վերայ ամենայն գործոց նոցա։

Բարձր արարէք զՏէր Աստուած մեր, երկիր պագէք ի լեառն սուրբ նորա, զի սուրբ է Տէր Աստուած մեր։

Ա-եղբարն ըստ Յովհաննու-, ԺԹ. 17։

Վասն Խայելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ նորա առեալ տանէին զնա, և բարձրեալ էր ինքնին զխաչափայտն, և ելանէր ի տեղին որ անուանէր Գագաթան, և կոչէր եբրայեցերէն Գողգոթա, ուր եւ ի խաչն իակ հանին զնա, և ընդ նմա երկուս ևս այլս ասի և անսի, և ի մէջի զՅիսուս։ Գրեաց և տախտակ Պիղատոս և եդ ի վերայ խաչի և էր գրեալ, Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից։ Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր տեղին ուր խաչեցաւն Յիսուս, և էր գրեալ եբրայեցերէն, Դաղմատերէն եւ Յունարէն, Ասեն ցՊիղատոս քահանայապետք Հրէից։ Մի գրեր Թագաւոր Հրէից, այլ թէ նա ասաց Թագաւոր եմ Հրէից։ Պատասխանի ետ Պիղատոս, Զոր ինչ գրեցին, գրեցի։

Խնդրեսցուք.— Կեցո։— Թագաւոր խաղաղութեան։

Հայր մեր։

ERMENİ KATOLİK
SURP AGOP VAKFI
SEÇİM KURULU
Sakızağacı, No. 31

OY PUSULASI

1.— 17 – Թէ կամեցեալ էիր պատարագ մատուցանել,
բայց զոյգ ընդ ոչխարէդ իսկ ոչ հանեար։

2.— 18 – Պատարագ Աստուծոյ հոգի խորանչ,
զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած
ոչ արհամարհէ։

3.— 19 – Բարի արա ծէր կամաց քով Սիւնի,
եւ շինեսցին պարիսպք Երուսաղեմի։

4.— 20 – Քանզի՞ամ հանեցիս ընդ պատարագս
արդարութեան, ուխտից պատարագք
հանցեն ի սեղան քո զուարակս։

5.— .....

6.— Թագաւոր արարածոյ, զհացն կենաց եւ
քաղցելոց եւ ըզբաժակն ուրախարար, որք յիւղամայ
տրամեցելոց։ Այս նոր ուխտէ իմոյ արեան
Փոխան հընոյ ուխտին արեան
Զոր յիշատակ իմ առնիցէք
Մինչեւ եկիցս ես մերս անգամ։

7.— .....

8.— .....

Ժողովեալ քս ի քէն հայցեմք ընդ ժողովեալ մեծասանին,
որ ըզկենդանարարըդ քո մարմին քաշխեալ եւ ուր ընդ
բաժակիս շնորհեա եւ մեզ ծէր ընդ նոսին հաղորդ
լինել քում սեղանին, կենաց հացիդ քոր փափագիմք
եւ ըմպելւոյդ ոյժ ծառայիմք։

9.— .....

10.— .....

11.— .....

12.— .....

Ողորմեա՛ ինձ Աստուած, ըստ մեծի՛ ողորմութեան քո՝
ըստ բազում գթութեան քում ջնջեա զանօրէնութիւն

2 – Առաւել լուայ զիս յանօրէնութենէ իմմէ,
եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

3 – Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, եւ մեղք
իմ առաջի՛ իմ են յամենայն ժամ։

4 – Քեզ միայն մեղայ Տէր,
եւ զչար առաջի՛ քո՛ արարի։

5 – Որպէս արդար եղիցիս ի բանս քո՝
եւ յաղթեսցես ի դատելն քո։

6 – Անօրէնութեամբ յղացաւ,
եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

7 – Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս
եւ ծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

8 – Ցողեա՛ յիս մշտկաւ եղէ սուրբ եղեց,
լուայ եւ քանդեսցի՛ն սպիտակ եղեց։

9 – Լսելի արա՛ ինձ Տեր զցնծութիւն եւ զուրախ
եւ ցնծացեն որկերք իմ տառապեալ

10 – Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, եւ զամենայն
անօրէնութիւնս իմ ջնջեա յինէն։

11 – Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս Աստուած,
եւ հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում։

12 – Մի ընկենուր զիս Տէր յերեսաց իմոց,
եւ զհոգի քո՛ սուրբ մի հաներ յինէն։

13 – Տուր ինձ ցնծութիւն փրկութեան,
եւ հոգւով պետութեան քո հաստատեա զիս։

14 – Ուսուցից անօրինաց զճանապարհս քո,
եւ ամբարիշտք առ քեզ դարձցեն։

15 – Փրկեա՛ զիս յարենէ Աստուած, Աստուած փրկ
իմոյ, եւ ցնծասցէ լեզուս իմ յարդարութեան քո։

16 – Տէր եթէ զշրթունս իմ բանաս,
բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

1000

ՀՀ Ազգային գրադարան
NL0633714